ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
17.12.2025 թվականին կնքված N ԵԳՀՄ-ԳՀԾՁԲ-26/6 գնման պայմանագրի

«13» հունվարի 2026թ.

ք. Երևան

«ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՍԱՀՔԻ ԵՎ ՀՈԿԵՅԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն՝ Գ. Գրիգորյանի, որը գործում է «ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՍԱՀՔԻ ԵՎ ՀՈԿԵՅԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և «ԱՎԵՏԻՍ ՍԱՀԱԿՅԱՆ» Ա/Ձ-ն (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենդրությամբ, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 17.12.2025թ. կնքված N ԵԳՀՄ-ԳՀԾՁԲ-26/6 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը, ինչպես նաև հաշվի առնելով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման պահանջը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

«ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՍԱՀՔԻ ԵՎ ՀՈԿԵՅԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-ի և «ԱՎԵՏԻՍ ՍԱՀԱԿՅԱՆ» Ա/Ձ-ի միջև 2025 թվականի դեկտեմբերի 17-ին կնքված թիվ «ԵԳՀՄ-ԳՀԾՁԲ-26/6» ծածկագրով պայմանագրում կատարել բանկային վավերապայմանների փոփոխություն՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ, Հ/Հ՝ 220115670428000 փոխարեն նշելով «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ, Հ/Հ՝ 1150008529509510 տվյալները:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՍԱՀՔԻ ԵՎ ՀՈԿԵՅԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ	«ԱՎԵՏԻՍ ՍԱՀԱԿՅԱՆ» Ա/Ձ
ՀՀ, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 27/10	ՀՀ, ք. Երևան, Խանջյան 3, 7 35
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ	«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1150013848540100	Հ/Հ՝ 1150008529509510
ՀՎՀՀ՝ 02253207	ՀՎՀՀ՝ 40163391
Տնօրեն՝ Գ. Գրիգորյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.